

Հավելված  
ՀՀ կառավարության 2014 թվականի  
հուլիսի 3-ի N 700 - Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
2015-2017ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ  
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹ Յ ՈՒ Ն**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....8**

Նպատակը և խնդիրները..... 8

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները..... 10

ՀՀ 2015 – 2017թթ ՄԺԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը..... 10

Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները..... 12

**ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....13**

**ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ..... 14**

1.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 14

1.2 ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ..... 15

1.3 ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ..... 15

Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ ..... 15

Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները ..... 16

**ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ .....17**

**ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2015–2017ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ..... 56**

**ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ ..... 61**

4.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ..... 61

4.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2015-2017ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 63

4.3 2015-2017ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 65

4.4 ՀՀ 2015-2017ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ..... 72

4.5. ՀՀ կառավարության 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվող պետական ծառայողների և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերում ընդգրկված կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի բարձրացման քաղաքականության վերաբերյալ ..... 74

4.6 ՀՀ 2015-2017ԹԹ ՄԺԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԸ ..... 80

**ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ..... 84**

**ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2015-2017ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 85**

**ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ..... 87**

6.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 87

6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ .....	94
6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	96
<b>ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>108</b>
<b>7.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>108</b>
7.1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	108
7.1.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ.....	136
7.1.3 ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	141
<b>7.2 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>154</b>
7.2.1 ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	154
7.2.2 Գիտության ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում .....	167
7.2.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) .....	173
<b>ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>176</b>
<b>8.1 ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....</b>	<b>176</b>
8.1.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	176
8.1.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ .....	181
8.1.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	199
<b>8.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ .....</b>	<b>202</b>
<b>8.3 2015-2017թթ. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ .....</b>	<b>209</b>
<b>ԳԼՈՒԽ 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>221</b>
9.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	221
9.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ	244
9.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ .....	250
<b>ԳԼՈՒԽ 10. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ .....</b>	<b>270</b>
<b>10.1. ՄՇԱԿՈՒՅԹ .....</b>	<b>270</b>
10.1.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	270
10.1.2. ՈԼՈՐՏԻ (ՀԱՄԱԿԱՐԳԻ) ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ.....	315
10.1.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	317
<b>10.2. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ .....</b>	<b>323</b>
10.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	323
10.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ.....	340
10.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ....	342

10.2.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	344
<b>10.3. ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ</b> .....	<b>347</b>
10.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	347
10.3.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ .....	354
10.3.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ .....	356
<b>10.4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ</b> .....	<b>357</b>
10.4.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	357
10.4.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ .....	363
10.4.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ .....	365
<b>ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>366</b>
11.1. ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	366
11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ .....	367
11.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	370
<b>ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>379</b>
12.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	379
12.2. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	387
12.3. ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ .....	389
12.4. ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	392
<b>ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ</b> .....	<b>395</b>
13.1 ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	395
13.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ .....	400
13.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	404
<b>ԳԼՈՒԽ 14. ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>414</b>
14.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	414
14.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ .....	422
14.3 ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	426
<b>ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ</b> .....	<b>438</b>
15.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	438
15.2. Ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում.....	447
15.3. Ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները).....	448
<b>ԳԼՈՒԽ 16 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ</b> .....	<b>453</b>
16.1 Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	453

16.2 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները .....	459
16.3 Ստանդարտացման ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	466
16.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	468
16.5 Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	475
16.6 Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	479
16.7 ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները .....	483
16.8 ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում ԵՎ Հավատարմագրման ազգային մարմնի պետական աջակցության ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	488
16.9 ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության պետական աջակցության ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	491
16.10 Որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	494
16.11 «Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների եվ կորուստների չափերի փորձաքննություն» ծրագրի իրավիճակի նկարագրությունը եվ հիմնական խնդիրները.....	502
16.12. «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացում» ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	506
16.13. «Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների» ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	510
16.14 «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	515
16.15 «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություն» ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները.....	518
16.16 . «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրի ընդհանուր նկարագիրը և հիմնական խնդիրները.....	521
16.17 «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» ծրագրի ընդհանուր նկարագիրը և հիմնական խնդիրները.....	524
16.18 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	527
16.18.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	527
16.18.2. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ.....	530
16.18.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	533
16.18.5. ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ.....	534
<b>ԳԼՈՒԽ 17. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ .....</b>	<b>536</b>

17.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները .....	536
17.2. Ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում .....	542
17.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները).....	543
<b>ԳԼՈՒԽ 18. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ .....</b>	<b>545</b>
18.1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ .....	545
18.2. ՀԱՍԱՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ .....	548
<b>ԳԼՈՒԽ 19. 2015-2017ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ.....</b>	<b>564</b>
19.1. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման հիմնադրույթները	564
19.2. 2011-2014 թթ հիմնական զարգացումները.....	567
19.3. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտությունը .....	570
19.4 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման սկզբունքները.....	571
19.5. 2015-2017 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը.....	571
19.6. 2015-2017 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ոլորտների	574
19.6.1. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ.....	575
19.6.2. Սոցիալական ծառայություններ.....	576
19.6.3. Տնտեսական ծառայություններ.....	579
<b>ԳԼՈՒԽ 20. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ .....</b>	<b>590</b>
<b>Հավելված N 1 .....</b>	<b>608</b>
<b>Հավելված N2 .....</b>	<b>626</b>
<b>Հավելված N3 .....</b>	<b>630</b>
<b>Հավելված N4 .....</b>	<b>710</b>

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում արձանագրված դրական տեղաշարժերը պայմանավորված են հիմնականում ՀՀ կառավարության տնտեսական գործառույթների իրականացմամբ:

Ինչպես և նախկինում առաջիկա տարիներին նույնպես կառավարությունը կշարունակի տնտեսական միջոցառումների իրականացումը՝ պետական միջամտությունն ուղղելով ինչպես շուկայի «բացերի» մեղմմանը, այնպես էլ՝ եկամուտների և այլ ռեսուրսների վերաբաշխմանն ու տնտեսության կայունացմանը: Կառավարության այսպիսի ծավալուն սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետության և ամբողջականության ապահովման գրավականը գերակա խնդիրների հստակեցումն ու դրանք միջնաժամկետ (նաև երկարաժամկետ) ռազմավարական ծրագրերի հենքի վրա լուծելն է: Մասնավորապես, ներկայումս ՀՀ իշխանությունների գերակա խնդիրներից մեկը երկրում բնակչության բարեկեցության աճն ու աղքատության հաղթահարումն է: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացն ըստ օրենքի հանդիսանում է ընդհանուր բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս և իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգով: ՀՀ բյուջետային գործընթացում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման փուլի առանձնացումը պայմանավորված է այդ փաստաթղթի քաղաքական կարևորությամբ: Հարկ է նշել նաև, որ համապարփակ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրն այն ռազմավարական հենքն է, որի շրջանակներում վարվում են նաև միջազգային ֆինանսական օժանդակության ներգրավման հիմնահարցերին առնչվող բանակցությունները:

### **Նպատակը և խնդիրները**

Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացի պրակտիկայում պետական բյուջեի նախագիծը մշակվում է մեկ տարվա կտրվածքով: Պետական ծախսերի կառավարման առումով մեկ տարվա կտրվածքով մշակվող և իրականացվող պետական բյուջեներն ունեն որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, տարեկան ծրագրերի հիմքում դրվում են կարճաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներ, իրականացվող քաղաքականությունների և տարեկան բյուջետային ծախսերի միջև կապը ժամանակային անհամապատասխանության պատճառով հստակ չէ: Այդ պատճառով, որպես կանոն, վերահսկման առարկա է հանդիսանում ծախսերի չափը և ոչ թե ակնկալվող արդյունքը (նաև մատուցվող ծառայության որակը): Պետական ծախսերի քաղաքականությունը հստակ ձևակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել պետական ծախսերի ծրագրային պահանջները միջնաժամկետ (հնարավորության դեպքում՝ նաև երկարաժամկետ) հեռանկարում, որն իր հերթին ենթադրում է մակրոտնտեսական

միջավայրի ակնկալվող զարգացումների և հասանելի բյուջետային միջոցների ծավալի կանխատեսելիություն:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական նպատակը պետական ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է:

Ըստ էության, պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը գնահատվում է հետևյալ երեք հայտանիշների հիման վրա՝

(i) Համընդհանուր հարկաբյուջետային կարգապահություն. բյուջետային ռեսուրսների փաթեթը պետք է լինի հստակ և համապարփակ ձևակերպված, ձևավորվի նախքան ըստ առանձին ուղղությունների ծախսերի բաշխումը և հիմնավորված լինի միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներով: Ծախսերի բաշխումը հստակորեն պետք է իրականացվի վերը նշված բյուջետային ռեսուրսների շրջանակներում, իսկ դրանց հետագա կատարումը՝ սահմանված ծախսային գերակայություններին համապատասխան ընտրված ծրագրերի գծով նախատեսված բյուջետային հատկացումների սահմանաքանակների շրջանակներում:

(ii) Տեղաբաշխման արդյունավետություն. պետական ծախսերը պետք է համահունչ լինեն պետական քաղաքականության գերակայություններին, և համակարգը պետք է հնարավորություն ընձեռի իրականացնել միջոցների միջոլորտային և ներոլորտային վերաբաշխում՝ նվազ գերակայություններից դեպի առավել կարևորները և ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցող ծրագրերը:

(iii) Տեխնիկական (արտադրական) արդյունավետություն. ճյուղային նախարարությունները (գերատեսչությունները) պետք է ապահովեն արդյունավետության առավելագույն հասանելի մակարդակ, որը պետք է համադրելի լինի մասնավոր հատվածի համապատասխան ցուցանիշների հետ:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման համակարգի ներդրումը նպատակ է հետապնդում լուծել հետևյալ խնդիրները՝

(i) բարելավել մակրոտնտեսական հաշվեկշռվածությունը՝ ի հաշիվ ռեսուրսների իրատեսական և համապարփակ փաթեթի ձևավորման,

(ii) նպաստել պետական ֆինանսական միջոցների հաշվին կատարվող բյուջետային հատկացումների միջոլորտային և ներոլորտային արդյունավետ վերաբաշխմանը՝ ըստ գերակա ուղղությունների,

(iii) հնարավորինս նվազեցնել քաղաքականությունների և դրանց ֆինանսավորման միջև առկա անորոշությունները՝ նպաստելով ծրագրերի մշակման որակի բարձրացմանը,

(iv) ըստ ոլորտների սահմանել կոշտ բյուջետային սահմանափակումներ՝ ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) համար պայմաններ և խթաններ ստեղծելով հասանելի միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման համար,



(v) բարելավել բյուջետային ծրագրերի գնահատման համակարգը և մեծացնել պետական ֆինանսների կառավարման թափանցիկության աստիճանը:

### **Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները**

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը շարունակական գործընթաց է և, ըստ էության, իրենից ներկայացնում է «քաղաքականությունների ձևակերպում - պլանավորում – բյուջետավորում» տրամաբանական ամբողջական շղթա: Այն հնարավորություն է ընձեռում մեղմել հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի միջև հնարավոր անհամապատասխանությունը, ինչպես նաև պետական ծախսերում կատարել առանձին բնագավառներում իրականացվող պետական քաղաքականության փոփոխություններին համարժեք փոփոխություններ: Այս առումով արդարացված է, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ նաև ՄԺԾԾ) մշակումը (և/կամ վերանայումը), ըստ ժամանակի, նախորդում է տարեկան պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ դառնալով տարեկան պետական բյուջեների կազմման ուղեցույց:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ենթադրում է՝

(i) մակրոտնտեսական կայուն միջավայրին համապատասխանող բյուջետային ռեսուրսների (մուտքերի) համապարփակ և իրատեսական գնահատում,

(ii) քաղաքականությունների իրականացման նպատակով կատարվող ծախսերի՝ վարից վեր մոտեցմամբ գնահատում,

(iii) հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի ներդաշնակության ապահովում համապատասխան մեխանիզմների օգնությամբ:

2015-2017թթ պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ներառում է նաև ծրագրավորման հիմքում դրված կանխատեսումների իրականացման հետ կապված ռիսկերի բացահայտման և ներկայացման գործընթացը: Վերը նշված ռիսկերը հանգամանալի ձևով ներկայացված են սույն ծրագրի մակրոտնտեսական, հարկաբյուջետային կանխատեսումներին, ինչպես նաև պետական պարտքի կառավարման ռազմավարությանը վերաբերող գլուխներում (համապատասխանաբար 2-րդ, 4-րդ և 20-րդ գլուխների համապատասխան մասերում), իսկ ռիսկերի համառոտագիրը ներկայացված է սույն ծրագրի N 1 հավելվածում:

### **ՀՀ 2015 – 2017թթ ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը**

ՀՀ 2015 – 2017թթ ՄԺԾԾ-ի մշակման գործընթացը կանոնակարգվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի բյուջետային գործընթացը

սկսելու մասին» N 1231-Ա որոշմամբ և այդ որոշման հանձնարարականների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումներով:

Ըստ էության, նման մոտեցումը խնդրին վկայում է այն մասին, որ ՀՀ կառավարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը որպես բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս դիտելով, կարևորում է նաև վերջինիս քաղաքական նշանակությունը:

Ընթացիկ տարում, ինչպես և նախորդ տարիներին ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացը կառավարվել, վերահսկվել և համակարգվել է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված ստորև նշված երկու մարմինների կողմից.

(i) Հայաստանի Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշտապես գործող բարձրագույն խորհուրդ (խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ), որն ապահովվել է ռազմավարական որոշումների կայացումը և մշակման գործընթացի վերահսկողությունը,

(ii) Հայաստանի Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման աշխատանքները համակարգող՝ մշտապես գործող խումբ (խմբի ղեկավար՝ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ), որը ապահովվել է պետական միջնաժամկետ ծրագրի մշակման աշխատանքների համակարգումը:

Նման մոտեցումը ընդգծում է բյուջետային գործընթացում ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) մասնակցության դերը, որը նպաստել է ճյուղային մակարդակում բյուջետային ծրագրման բարելավմանը և ռազմավարական հիմնավոր որոշումների կայացմանը՝ հնարավորինս ապահովելով նախանշված քաղաքականությունների և հասանելի ֆինանսական միջոցների համապատասխանությունը: Այս համատեքստում կարևորվում է ՀՀ ֆինանսների նախարարության ու ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) գործողությունների փոխհամաձայնեցումը, որից մեծապես կախված է ոչ միայն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծերի մշակման որակը, այլ նաև դրանց կատարումը:

Հարկ է նշել, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշտապես գործող բարձրագույն խորհրդի աշխատանքներին ՀՀ վարչապետի առաջարկությամբ ներգրավված են եղել ՀՀ Ազգային ժողովում մեծամասնություն կազմող քաղաքական ուժը ներկայացնող մի շարք պատգամավորներ: Նման մոտեցումը ապահովում է այդ քաղաքական ուժի մասնակցությունը բյուջետային գործընթացին արդեն իսկ ՄԺԾԾ-ի մշակման նախնական փուլում, որը հնարավորություն է ընձեռում հենց սկզբից համադրել ՀՀ կառավարության և նշված քաղաքական ուժի մոտեցումները և կողմնորոշումները ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսվելիք առանձին ռազմավարությունների և ծախսային գերակայությունների ընտրության հարցերում:

## **Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները**

Ծրագրի նպատակների իրագործումն ապահովելու համար ՀՀ կառավարությունն իրականացնում է բարեփոխումներ նաև ծրագրային բյուջետավորումը հանրապետությունում ներդնելու ուղղությամբ: Ծրագրային բյուջետավորման բարեփոխման գերակա նպատակը պետական ծախսերի տնտեսական արդյունավետության բարձրացումն է՝ ռեսուրսներն առաջնահերթ ծախսային ծրագրերին ուղղելու համար ՀՀ կառավարությանն աջակցելու միջոցով: Ծրագրային բյուջետավորման շրջանակներում այդ աջակցությունն իրականացվում է ՀՀ կառավարությանը (և հանրությանը) պետական ֆինանսավորման դիմաց տրամադրվող ծառայությունների կամ անմիջական արդյունքների վերաբերյալ ավելի ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Հետևաբար, ծրագրային բյուջետավորումը հանդիսանում է գործիք սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձին օղակները շաղկապելու համար: Նշվածը կօգնի հասկանալ ծախսերի վերաբերյալ կայացված որոշումների նպատակաուղղվածությունը և ծախսային քաղաքականությունն ամբողջությամբ ուղղել կառավարության ընդհանուր նպատակների իրագործմանը:

2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ կառավարության ներկայացմամբ ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, կատարվել է առաջին քայլը՝ ծրագրային բյուջետավորումը բյուջետային գործընթացի մաս դարձնելու ուղղությամբ, մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացվելիք պետական բյուջեի նախագծի կազմում այսուհետ պետք է ներկայացվի նաև պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծով նախատեսված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող փաստաթուղթը:

**ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

# **ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

## **1.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են 2014 թվականի մայիսին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի ՀՀայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարության ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճամաչելու մասին> ՀՀ կառավարության N 442-Ն որոշմամբ: Վերը նշված փաստաթղթերի համաձայն ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները (սույն ծրագրի իմաստով գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ):

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կպահպանվի վերը նշված գերակայությունների համաձայն իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման համար բյուջետային ռեսուրսները համալրելու պահանջը այլ՝ հիմնականում արտաքին աղբյուրներից պաշտոնական դրամաշնորհների և փոխառու միջոցների ներգրավման միջոցով: Վերը նշվածը, հաշվի առնելով նաև պետական

պարտքի ցուցանիշները խելամիտ սահմաններում պահելու խնդիրը, էականորեն սահմանափակում է ՀՀ կառավարության հնարավորությունները:

## **1.2 ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ՀՀ կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկն է: Հարկաբյուջետային քաղաքականությունը ներկայացնող այս փաստաթուղթը, ոլորտների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ միասին, կազմում է ՀՀ կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական բովանդակությունը:

Սույն ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մասը ներկայացնում է ՀՀ կառավարության ընդհանուր երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները, միջնաժամկետ և կարճաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները և ռազմավարական ծախսային գերակայությունները: Դրանք տնտեսական և հարկաբյուջետային այն չափանիշներն են, որոնք դրվելու են ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

## **1.3 ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

### **Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ**

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը ՀՀ 2015-2017թթ ՄԺԾԾ-ի մշակման ընթացքում առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի մայիսին հավանության արժանացած ՀՀ կառավարության գործունեության և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարության ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճամաչելու մասին» ՀՀ կառավարության 442-Ն որոշմամբ: Քանի որ բյուջետային մուտքերի սղությունը և ելքերի վրա ազդող գործոնները սահմանափակում են կարճաժամկետ հեռանկարում այդ սկզբունքների իրագործման հնարավորությունները, ՀՀ կառավարությունը մտադիր է շարունակել այդ սկզբունքների կիրառումը երկարաժամկետ հեռանկարում: Դրանք հիմք կծառայեն ընթացիկ քաղաքականությունների և ՀՀ կառավարության երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

## **Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները**

ՀՀ կառավարությունը առկա ծախսային գերկայությունները համադրել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների հետ՝ հաջորդ 3 տարիների ընդհանուր ծախսերի մակարդակը որոշելու համար:

Համախառն ներքին արդյունքի (այսուհետև՝ ՀՆԱ-ի) նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2015-2017թթ կտատանվի 24.34%-ի սահմաններում, իսկ ներքին ռեսուրսների հաշվին ձևավորվող եկամուտների դեպքում՝ 23.2-23.7%-ի սահմաններում: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2015-2017թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 26.38-26.16%-ի սահմաններում:

## **ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

### **2.1 Մակրոտնտեսական կանխատեսումներ և վերլուծություն Ներածություն**

Միջանաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2015-2017 թվականների մակրոտնտեսական հեռանկարները:

#### **Տնտեսական կանխատեսումների նպատակը**

Հայաստանի տնտեսության իրավիճակի միջին ժամկետ կանխատեսումները հիմք են տալիս պատկերացում ունենալ այն իրական միջավայրի մասին, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Մյուս կողմից կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, հետևաբար մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են տալիս հասկանալու, թե կառավարության որդեգրած միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով է համահունչ տնտեսության այլ հատվածների զարգացման միտումներին:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

#### **Տնտեսության նկարագրություն**

Տնտեսությունը կարելի է նկարագրել հետևյալ վեց հիմնական ասպեկտներով.

- Համախառն առաջարկ (չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով),



- Համախառն պահանջարկ (չափվում է պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ),

- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը, և գնաճ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական ներմուծված ապրանքների գները) ինդեքսով (ՍԳԻ)),

- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, ցույց է տալիս թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),

- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով),

- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է տնտեսության ներկայիս և միջնաժամկետ հեռանկարային իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: Միջնաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 1. Վերջին տարիների միտումներ և ՄԺԾԾ-ի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ

Չափորոշիչ	2011	2012	2013	2014	2015	2016	2017
	Փաստ	Փաստ	Փաստ	Ծրագիր	Կանխ	Կանխ	Կանխ
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	4.7	7.2	3.5	4.0	5.0	5.3	5.7
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	96.6	101.2	103.7	101.6	100.2	99.3	98.3
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	27.3	25.4	21.7	21.9	21.3	21.5	22.3
ՀՆԱ դեֆլատոր	104.3	98.8	103.2	104.0	104.0	104.0	104.0
12-ամսյա գնաճ	4.7	3.2	5.6	3.2	4.0	4.0	4.0
Բանկային համակարգի ներգրավածություն (փողի գանգված/ՀՆԱ %)	29.8	33.7	36.2	37.3	38.0	38.7	39.2
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ %	-11.4	-12.0	-10.5	-9.8	-8.5	-7.9	-7.1

**Համախառն առաջարկ**

Ինչպես արդեն նշել ենք, երկրում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագու-

մարով, որի փոփոխությունն էլ նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի<sup>1</sup> միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

### **Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները**

2011-2013 թվականներին համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) միջին աճը կազմեց շուրջ 5.1 տոկոս: Ընդ որում, 2011-2013 թվականներին աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ շինարարության<sup>2</sup>: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.2 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 5.5 տոկոս, արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.4 տոկոսը՝ 8.4 տոկոս իրական աճի պայմաններում, իսկ գյուղատնտեսության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.9 տոկոսը՝ 10.2 տոկոս իրական աճի պայմաններում: Շինարարությունը միջինում նվազել է 6.1 տոկոսով՝ 0.9 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին:

2014 թվականի հունվար-ապրիլին գրանցվել է տնտեսական ակտիվության (ՏԱՑ)<sup>3</sup> աճ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշը իրական արտահայտությամբ աճել է 3.6 տոկոսով: Ընդ որում՝ տնտեսական ակտիվությանն ամենամեծ նպաստումն են ունեցել ծառայությունների ճյուղի (2.6 տոկոսային կետ<sup>4</sup>) և գյուղատնտեսությունը ճյուղի (1.4 տոկոսային կետ) համախառն թողարկումների իրական աճերը: Շինարարությունը համեստ (0.1 տոկոսային կետ) նպաստում է ունեցել տնտեսական ակտիվության աճին, իսկ արդյունաբերության նպաստումը՝ 0.4 տոկոսային կետով բացասական է:

**Կանխատեսում:** ՀՀ տնտեսության 2014 թվականի առաջին ամիսների զարգացումները և համաշխարհային տնտեսությունում աճի կանխատեսումները (տես՝ Ներդիր 1-ը) հիմք են հանդիսացել 2014 թվականի տնտեսական աճի տեմպի կանխատեսման համար: 2014 թվականի համար ծրագրված է 4.0 տոկոս տնտեսական աճ, իսկ 2015-2017 թվականների իրական ՀՆԱ-ի տարեկան աճը կանխատեսվել է համապատասխանաբար՝ 5.0, 5.3 և 5.7 տոկոսի չափով, որին հիմնականում կնպաստեն ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը (նպաստումը. ՀՆԱ-ի միջին 5.3 տոկոս աճին կկազմի համապատասխանաբար 2.1 և 1.2 տոկոսային կետ): Միջնաժամկետ կանխատեսումների համար հիմք են հանդիսացել տնտեսության զարգացման արձա-

<sup>1</sup> ՀՆԱ-ի իրական աճ ասելով հասկանում ենք տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի ծավալային աճը՝ առանց գնային փոփոխության:

<sup>2</sup> Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:

<sup>3</sup> 2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել ՏԱՑ-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անտղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԶՕ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

<sup>4</sup> ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

նագրված միտումներն ու առանձնահատկությունները, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված համաշխարհային տնտեսության վերաբերյալ սպասումներն ու վերլուծությունները, ինչպես նաև ճյուղային նախարարությունների կողմից ներկայացված միջնաժամկետ պետական քաղաքականության ուղղությունները:

Ներդիր 1

**Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները**

Համաշխարհային տնտեսական աճի վերաբերյալ դրական սպասումներն ընդհանուր առմամբ պահպանվում են և այդ է վկայում ԱՄՀ վերջին կանխատեսումը: Ընդ որում, համաշխարհային տնտեսությունը թե 2014, և թե 2015 թվականներին աճելու է համապատասխանաբար 103.6 և 103.9 տոկոս տեմպերով: Զարգացած երկրներում աճի տեմպերը 2014թ-ին կկազմեն 102.2 տոկոս, իսկ զարգացող երկրներում շատ ավելի բարձր՝ 104.9 տոկոս: Հատկանշական է, որ Հայաստանի հիմնական գործընկեր երկրներից Ռուսաստանի տնտեսական աճի վերաբերյալ սպասումները տարեսկզբի համեմատ վերանայվել են նվազման, իսկ Գերմանիայի՝ աճի ուղղությամբ:

Չնայած համաշխարհային տնտեսական բարենպաստ զարգացումներին, այնուամենայնիվ, այն չի ուղեկցվում զբաղվածության կլանմամբ, իսկ զարգացող երկրների համար պահպանվում են որոշակի գնաճային ռիսկեր: Այսպես, զարգացող երկրներում, որտեղ սննդամթերքը և վառելիքը կազմում են սպառման ավելի մեծ կշիռ, գնաճը որոշ ժամանակ կմնա բարձր մակարդակի վրա, սակայն զգալի բացասական ազդեցություն տնտեսական աճի վրա չի լինի: Ի հայտ են գալիս նաև եկամուտների աճող անհավասարության խնդիրներ:

Աղյուսակ: Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները

				Կանխատեսում			
				2014թ. հունվարին		2014թ. ապրիլին	
<i>Տոկոսային փոփոխություն</i>	2011	2012	2013	2014	2015	2014	2015
<b>Համաշխարհային թողարկում</b>	<b>4.0</b>	<b>3.2</b>	<b>3.0</b>	<b>3.7</b>	<b>3.9</b>	<b>3.6</b>	<b>3.9</b>
<b>Զարգացած երկրներ</b>	<b>1.6</b>	<b>1.4</b>	<b>1.3</b>	<b>2.2</b>	<b>2.3</b>	<b>2.2</b>	<b>2.3</b>
ԵՄ	1.4	-0.7	-0.5			1.2	1.5
Գերմանիա	3.1	0.9	0.5	1.6	1.4	1.7	1.6
Մեծ Բրիտանիա	0.9	0.3	1.8	2.4	2.2	2.9	2.5
ԱՄՆ	1.8	2.8	1.9	2.8	3.0	2.8	3.0
<b>Զարգացող երկրներ</b>	<b>6.4</b>	<b>5.0</b>	<b>4.7</b>	<b>5.1</b>	<b>5.4</b>	<b>4.9</b>	<b>5.3</b>
Չինաստան	9.3	7.7	7.7	7.5	7.3	7.5	7.3
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>4.8</b>	<b>3.4</b>	<b>2.1</b>	<b>2.8</b>	<b>3.1</b>	<b>2.3</b>	<b>3.1</b>
Ռուսաստան	4.3	3.4	1.3	2.0	2.5	1.3	2.3
<b>Սպառողական գներ</b>							
<b>Զարգացած երկրներ</b>	<b>2.7</b>	<b>2.0</b>	<b>1.4</b>	<b>1.7</b>	<b>1.8</b>	<b>1.5</b>	<b>1.6</b>
ԵՄ	3.1	2.5	1.3	-	-	0.9	1.2
Գերմանիա	2.5	2.1	1.6	-	-	1.4	1.4
Մեծ Բրիտանիա	4.5	2.8	2.6	-	-	1.9	1.9
ԱՄՆ	3.1	2.1	1.5	-	-	1.4	1.6
<b>Զարգացող երկրներ</b>	<b>7.2</b>	<b>6.0</b>	<b>5.8</b>	<b>5.6</b>	<b>5.3</b>	<b>5.5</b>	<b>5.2</b>
Չինաստան	5.4	2.6	2.6	-	-	3.0	3.0
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>10.1</b>	<b>6.5</b>	<b>6.4</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>6.6</b>	<b>6.1</b>
Ռուսաստան	8.4	5.1	6.8	-	-	5.8	5.3
<b>Հումքի գներ</b>							
Նավթի գներ <sup>[1]</sup>	31.6	1.0	-0.9	-0.3	-5.2	0.1	-6.0
Ոչ նավթային գներ	17.8	-10.0	-1.2	-6.1	-2.4	-3.5	-3.9


Աղբյուրը՝ World Economic Outlook, 2014, April.

<sup>1</sup>UK Brent, Dubai, WTI տիպի նավթի գների միջին թվաբանականը

Աղյուսակ 2. ՀՆԱ-ի իրական աճի ըստ տնտեսության ճյուղերի

	2011	2012	2013	2014	2015	2016	2017
	Փաստ	Փաստ	Փաստ	Ծրագիր	Կանխ	Կանխ	Կանխ
Արդյունաբերություն	13.6	6.3	5.4	2.0	6.8	7.4	7.4
Գյուղատնտեսություն	14.0	9.5	7.2	5.0	3.8	3.9	4.1
Շինարարություն	-12.2	4.8	-10.8	2.0	4.8	5.4	6.8
Ծառայություններ	4.7	6.3	5.6	4.6	4.9	5.1	5.5
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	3.8	9.9	2.8	5.0	4.8	4.9	5.1
Ընդամենը ՀՆԱ	4.7	7.2	3.5	4.0	5.0	5.3	5.7

Գծապատկեր 1. Տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող իրական աճին նպաստման չափերը



**Արդյունաբերություն**

Աղյուսակ 2-ից կարելի է նկատել, որ 2011-2013 թվականների արդյունաբերության ճյուղի ավելացված արժեքի իրական աճի բավականին բարձր է եղել և ճյուղում միջին հաշվով գրանցվել է 8.4 տոկոս աճ: Հատկանշական է, որ ճգնաժամից հետո արդյունաբերության ճյուղն ամենաբազմ է վերականգնվել և այժմ գերազանցում է նախաճգնաժամային մակարդակը 29%-ով: Արդյունաբերության նշված աճը էապես պայմանավորված էր հիմնականում ճգնաժամից հետո համաշխարհային պահանջարկի վերականգնմամբ, ինչպես նաև արտահանմանն ուղղված արդյունաբերական նոր քաղաքականությամբ: Ընդ որում՝ արդյունաբերության աճին ամենամեծ նպաստումն է ունեցել մշակող արդյունաբերությունը՝ արդյունաբերության վերը նշված 8.4 տոկոս աճին նպաստելով 4.8 տոկոսային կետով, որին բացի նշված գործոններից նպաստել է նաև տնօրինվող եկամտի միջինում 5.6 տոկոս աճը: Հանքարդյունաբերության ոլորտը հաջորդ մեծ 1.9 տոկոսային կետով նպաստումն է ունեցել արդյունաբերության աճին և նշված ժամանակահատվածում արձանագրել է բարձր աճի ցուցանիշը՝ միջինում 11.8 տոկոս: Էլեկտրաէներգիայի

արտադրությունը միջինում 8.3 տոկոս աճի ցուցանիշ է արձանագրել 2011 թվականից՝ պայմանավորված ՋԷԿ-երում իրականացված խոշորածավալ ներդրումներով և Իրանի իսլամական հանրապետություն արտահանման ծավալներով՝ չնայած 2013 թվականի գազի և էլեկտրաէներգիայի գնի թանկացումն իր ազդեցությունն է թողել ճյուղի վրա և ոլորտում արձանագրվել է 0.6 տոկոս անկում:

2013 թվականի հունվար-ապրիլին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի համախառն թողարկման ծավալների 1.6 տոկոս իրական նվազում: Վերջինիս հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերության 2.8 տոկոս անկումը՝ պայմանավորված հիմնականում սննդամթերքի արտադրության, խմիչքների արտադրության, ոսկերչական և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության համապատասխանաբար՝ 7.4, 4.2, 40.6 և 23.2 տոկոս նվազմամբ: Հանքագործական արդյունաբերությունը նույնպես բացասական է նպաստել արդյունաբերության աճին, որը կրում է մետաղների գների նվազման ազդեցությունը: Արդյունաբերական արտադրանքի իրական աճին դրական նպաստում են ունեցել էլեկտրաէներգիայի արտադրության 3.4 և ջրամատակարարման 6.2 տոկոս աճը:

**Կանխատեսում:** Արդյունաբերության ճյուղում ավելացված արժեքի աճը ակնկալվում է, որ տարեվերջին իրական արտահայտությամբ կկազմի առնվազն 2.0 տոկոս, իսկ 2015-2017 թվականներին կդրսևորի միջինում 7.2 տոկոս աճ, որը համահունչ կլինի հանքարդյունաբերության ոլորտում և մշակող արդյունաբերության մի շարք ենթաճյուղերում ներդրումների աճին<sup>5</sup>, բնակչության տնօրինվող եկամուտների կանխատեսվող աճի պայմաններում ներքին պահանջարկի աճին և վերջապես՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությանը: Արդյունաբերության միջնաժամկետ կանխատեսման համար հիմք է հանդիսացել համաշխարհային պահանջարկի աճի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների գնահատականները, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից տնտեսական խթանմանն ուղղված պետական կարգավորման միջոցառումների վերաբերյալ գնահատականները:

### **Գյուղատնտեսություն**

2011-2013 թվականներին ճյուղում արձանագրվել են բավականին բարձր աճի ցուցանիշներ, որը միջինում կազմել է 10.2%:

2014 թվականի հունվար-ապրիլին գյուղատնտեսության և ձկնորսության համախառն թողարկումն իրական արտահայտությամբ աճել է 5.2 տոկոսով<sup>6</sup>, որը զուգակցվել է անասնաբուծության և ձկնորսության 4.9 և 20.2 տոկոս աճերով: Բուսաբուծության ճյուղում գրանցվել է 1.5 տոկոս անկում: Տարվա առաջին չորս ամիսներին գյուղատնտեսության մեջ գերակշռող է

<sup>5</sup> Հիմնականում դա պայմանավորված է կառավարության կողմից իրականացվող ներդրումների խրախուսման քաղաքականությամբ՝ ներդրումային բնույթի ծրագրերի համար ԱԱՀ-ի արտոնյալ պայմանների տրամադրմամբ:

<sup>6</sup> Ենթաճյուղերի նպաստումների ցուցանիշները այս և հաջորդ ճյուղերի համար հաշվարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ ԱՎԾ ամսական ցուցանիշների պաշտոնական հրապարակումների հիման վրա:

անասնաբուժական արտադրանքի տեսակարար կշիռը, որտեղ 6.7, 6.2 և 4.7 տոկոս աճի ցուցանիշներ են արձանագրվել համապատասխանաբար ձվի, մսի և կաթի արտադրության ենթաճյուղում: Ձկնորսությունն իրական արտահայտությամբ աճել է 36.1 տոկոսով:

**Կանխատեսում:** 2014 թվականի տարեվերջին ակնկալվում է գյուղատնտեսության իրական աճ շուրջ 5.0 տոկոսի շրջանակներում: 2015-2017 թվականներին ճյուղի միջին աճը կկազմի շուրջ 4.0 տոկոս, որի համար հիմք են հանդիսացել ճյուղի զարգացմանն ուղղված կառավարության կողմից իրականացվող<sup>7</sup> ծրագրերի ակնկալվող արդյունքները ու նախորդ տարիներին դրսևորած զարգացման միտումները:

### **Շինարարություն**

Շինարարության ճյուղը ճգնաժամից հետո արձանագրած խոշոր անկումից հետո 2011-2013 թվականներին չվերականգնվեց, այլ շարունակեց անկում ապրել՝ միջինում կազմելով 6.1%: Շինարարության ծավալների նման անկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների հիմնականում պայմանավորված է կազմակերպությունների միջոցների հաշվին, միջազգային վարկերի և մարդասիրական միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատմամբ:

2014 թվականի հունվար-ապրիլին շինարարության ծավալները իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել են 0.7 տոկոսով: Շինարարության ծավալների աճին հիմնականում նպաստել է միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացվող շինարարության 66.6 տոկոս աճը: Չնայած պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալի 10.9 տոկոս նվազմանը՝ այն, այնուամենայնիվ, ունեցել է դրական նպաստում: Դրական նպաստում է ունեցել նաև մարդասիրական օգնության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճը (16.1%-ով): Բացասական նպաստում են ունեցել բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների (32.9%-ով), համայնքների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների (57.5%-ով) և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների (21.0%-ով) կրճատումները:

Շինարարությունում միջոցներն ըստ տնտեսության ճյուղերի հիմնականում ուղղվել են անշարժ գույքի հետ կապված գործունեությանը՝ 25.3 տոկոս, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը 11.5 տոկոս և տրանսպորտի 10.7 տոկոս: Հաջորդ մեծ մասնաբաժին ունեցողները. տեղեկատվության և կապի (7.1%) ու մշակող արդյունաբերության (6.5%) ճյուղերն են:

<sup>7</sup> Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, գյուղատնտեսական մթերքների իրացման շղթայի ապահովման, ցորենի և գարու սերմնաբուծության և սերմնարտադրության, օրգանական գյուղատնտեսության զարգացման, տեղական կենսապարարատանյութերի զարգացման, գյուղատնտեսական տեխնիկայի վերագինման ծրագրեր:

**Կանխատեսում:** Շինարարության ճյուղի ավելացված արժեքի աճը 2014 թվականին կկազմի շուրջ 2.0 տոկոս, իսկ միջնաժամկետում՝ շուրջ 5.7 տոկոս: Ծյուղի վերականգնումը կլինի աստիճանական և կնախանջի տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխություններին նպատակաուղղված տնտեսական նոր քաղաքականության ուղղությունը: Ընդ որում՝ շինարարության կանխատեսման հիմքում դրված է այն ենթադրությունը, որ ներդրումները ի հեճուկս բնակարանաշինության շարունակելու են ուղղվել արտադրողական ներդրումներին, որը համահունչ կլինի տնտեսության զարգացման նոր ավելի դիվերսիֆիկացված մոդելին:

### **Ծառայություններ**


2011-2013 թվականներին ծառայությունների ոլորտի ավելացված արժեքի միջին իրական աճը կազմել է 5.5 տոկոս, որը հիմնականում պայմանավորված էր ֆինանսական և ապահովագրական գործունեության ու առևտրի ենթաճյուղերի աճերով:

2014 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում մատուցված ծառայությունների ծավալը 2013 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 2.8 տոկոսով, որին հիմնականում նպաստել է մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների (1.5 տոկոսային կետ) 28.7 տոկոս աճը: Մեծ նպաստում են ունեցել նաև անշարժ գույքի հետ կապված գործունեության (0.5 տոկոսային կետ), տրանսպորտի (0.3 տոկոսային կետ), մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության (0.3 տոկոսային կետ) և առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման (0.2 տոկոսային կետ) ծառայությունները: Իսկ ֆինանսական և ապահովագրական գործունեության նպաստումը բացասական է եղել (-0.3 տոկոսային կետ): 2014 թվականի հունվար-ապրիլ ամիսներին առևտրի շրջանառությունը 2013 թվականի համապատասխան ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ, իրական արտահայտությամբ աճել է 5.4 տոկոսով, որին հիմնականում նպաստել է մեծածախ առևտրի աճը (4.0 տոկոսային կետ):

**Կանխատեսում:** 2014 թվականին հաշվի առնելով ընթացիկ զարգացումները ՀՆԱ-ի կայուն աճի միտումներին համահունչ տարեվերջին ակնկալվում է 4.6 տոկոս իրական աճ, իսկ 2015-2017 թվականներին տնտեսության կայուն զարգացմանը համամասնորեն ճյուղի աճը կկազմի միջինում 5.2 տոկոս: Ծառայությունների կանխատեսման հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ ծառայությունները պետք է առնվազն համահունչ լինեն ՀՆԱ-ի աճին, քանի որ Հայաստանի զարգացման նոր տնտեսական մոդելը ենթադրում է առավելապես ծառայությունների դիվերսիֆիկացում և աճ<sup>8</sup>:

<sup>8</sup> Աշխարհի զարգացած երկրները իրենց տնտեսական զարգացման ճանապարհին աստիճանաբար մեծացրել են հատկապես ծառայությունների մասնաբաժինը:

Գծապատկեր 2 Ոլորտների տեսակարար կշիռները 2011 -2017 թվականներին



**Աշխատանքի շուկա:** 2011-2013 թվականներին գործազրկության մակարդակը հանրապետությունում միջինում կազմել է 17.3<sup>9</sup> տոկոս՝ ունենալով նվազման միտում:

2011-2013 թվականներին միջին ամսական անվանական աշխատավարձը հանրապետությունում միջինում աճել է 5.3 տոկոսով: 2013 թվականին հունվար-դեկտեմբերին տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին աշխատավարձը<sup>10</sup> համապատասխանաբար կազմել է՝ 120623 և 185630 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 151099 դրամ: Հատկանշական է, որ 2011-2013 թվականների զարգացումների արդյունքում աշխատանքի արտադրողականությունն աճել է շուրջ 7.9 տոկոսով:

2014 թվականի հունվար-ապրիլին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 7.2 տոկոսով<sup>11</sup>՝ կազմելով 159511 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները պետական և ոչ պետական հատվածներում աճել են 6.0 և 8.5 տոկոսով՝ կազմելով համապատասխանաբար 138493 և 190155 դրամ: Նշված ժամանակահատվածում իրական աշխատավարձը աճել է 2.5 տոկոսով:

**Կանխատեսում:** Տնտեսության զարգացումներին համահունչ, ինչպես նաև հաշվի առնելով ընթացիկ տարվա միտումները 2014 թվականին կանխատեսվում է գործազրկության մակարդակի նվազում: Միջնաժամկետում տնտեսական ակտիվության աճին զուգընթաց գործազրկության

<sup>9</sup> 2012 թվականի փետրվար ամսից ՀՀ ԱՎԾ-ն անցում է կատարվել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա աշխատանքի շուկայի ցուցանիշների հաշվարկմանը:  
<sup>10</sup> Հաշվարկում ընդգրկված 2013թ. միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշը նախնական է, որում ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների ցուցանիշները: ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հանաձայն 2013թ.-ից աշխատավարձի ցուցանիշներում ներառված է նաև գինվորականների աշխատավարձը:  
<sup>11</sup> Սույն և դրան հաջորդող ցուցանիշները հաշվարկվել են ելնելով 01.01.2013թ.-ից ուժի մեջ մտած "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքին (ՀՕ-246) համապատասխան, 2013թ.-ից աշխատավարձի ցուցանիշը նախորդող ժամանակագրական շարքի հետ համադրելի դարձնելու նպատակով, նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ գործող մեթոդաբանության գործատուի կողմից նախկինում վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվարկային (պայմանականորեն) դրույքաչափերը կիրառելու մեթոդով:



մակարդակի աստիճանական նվազման միտումը կպահպանվի: Տնտեսության զարգացումները կկլանվեն բնակչության զբաղվածության կողմից այնպես, որ ապահովվի տնտեսության արտադրողականության աստիճանական բարելավում՝ աշխատանքի արտադրողականության աճը միջնաժամկետ հատվածում միջին հաշվով կկազմի շուրջ 4.4 տոկոս:

### **Համախառն պահանջարկ**

Համախառն պահանջարկը հիմնականում պատկերացում է տալիս տնտեսությունում ստեղծված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտներն ուղղակի սպառման են ուղղվելու, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման բաղադրիչներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին:

### **Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները**

2011-2013 թվականների տնտեսական աճը որակապես տարբերվում է տնտեսության նախաճգնաժամային զարգացումներից՝ պայմանավորված այն հանգամանքով, որ եթե նախկինում տնտեսական աճը գերազանցապես պայմանավորված է եղել ներքին պահանջարկով, ապա 2011-2013 թվականներին՝ արտաքին պահանջարկով:

**Համախառն սպառում:** 2011-2013 թվականներին վերջնական սպառումը իրական արտահայտությամբ միջինում աճել է 4.6 տոկոսով՝ ՀՆԱ-ի միջինում 5.1 տոկոս աճի պայմաններում: Չնայած 2013 թվականին վերջնական սպառման իրական աճը համահունչ է եղել ՀՆԱ-ի և տնօրինվող եկամտի իրական աճի միտումներին, միջինում այն զիջել է ՀՆԱ-ի իրական աճին:

Համախառն պահանջարկի կառուցվածքում սպառման մասնաբաժինը աճել է՝ 2011-2013 թվականներին միջինում կազմելով 100.5 տոկոս: Սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները միջինում կազմել են համապատասխանաբար՝ 13.4 և 87.1տոկոս:

**Կանխատեսում:** Մինչև տարեվերջ ՀՆԱ-ի կանխատեսված 4.0 տոկոս աճի պարագայում կունենանք սպառման ավելի համեստ՝ շուրջ 2.7 տոկոս աճ: 2015-2017 թվականներին, կապված տնտեսության զարգացման և արտաքին աշխարհից ներհոսող մասնավոր տրանսֆերտների ակնկալվող աճի հետ կանխատեսվում է սպառման աճ միջինում 4.2 տոկոսի չափով:

**Համախառն ներդրումներ:** 2011-2013 թվականներին իրական կապիտալ ներդրումները միջինում նվազել են 5.4 տոկոսով: Ընդ որում պետական ներդրումները միջինում նվազել են 9.6 տոկոսով, իսկ մասնավոր ներդրումները՝ 4.3 տոկոսով: Հատկանշական է, որ չնայած մասնավոր ներդրումները նվազել են, սակայն դրանց կառուցվածքում աճել են արտադրողական ներդրումները, որոնք ուղղված են տնտեսության իրական հատվածի հեռանկարային աճին և նվազել են հատկապես բնակարանաշինությանն ուղղված ներդրումները:

**Կանխատեսում:** 2014 թվականին կանխատեսվում է կապիտալ ներդրումների 4.9 տոկոս աճ պայմանավորված պետական ներդրումների 16 տոկոս աճով: Միջնաժամկետում ներդրումները կդրսևորեն աճի միտում միջինում 4.5 տոկոսի չափով, որը հիմնականում կպայմանավորվի արտադրողական բնույթի ներդրումներով՝ հիմքեր ստեղծելով ապագա կայուն աճի համար:

**Ջուտ արտահանում:** 2011-2013 թվականներին արտահանման իրական ծավալներն ավելացել են միջինում 13.1 տոկոսով, որը պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանվող ապրանքների մրցունակության բարձրացմամբ, ինչպես նաև արտահանման խրախուսմանն ուղղված կառավարության կողմից ձեռնարկված գործողություններով: Իսկ ներմուծումը նվազել է 1.2 տոկոսով:

**Կանխատեսում:** 2014 թվականի վերջին իրական արտահայտությամբ կունենանք ներմուծման 3.5 և արտահանման 7.9 տոկոս աճ: 2015-2017 թվականներին, պայմանավորված համաշխարհային տնտեսության զարգացումներով, որը կարտահայտվի մեր տնտեսության արտադրանքի նկատմամբ արտաքին պահանջարկի մեծացմամբ, կանխատեսվում է արտահանման ծավալների միջին աճ 7.9 տոկոսի և ներմուծման ծավալների՝ 2.8 տոկոսի չափով:

Աղյուսակ 3. ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը (տոկոս)

	2011	2012	2013	2014*	2015*	2016*	2017*
Սպառում	2.6	7.7	3.6	2.7	3.5	4.4	4.7
Ներդրում	-5.2	0.5	-11.5	4.9	1.2	4.3	8.0
Արտահանում	14.7	8.4	16.3	7.9	8.6	7.9	7.4
Ներմուծում	-1.4	-2.8	0.7	3.5	2.4	2.8	3.2
Ընդամենը ՀՆԱ	4.7	7.2	3.5	4.0	5.0	5.3	5.7

Աղյուսակ 4. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում

	2011	2012	2013	2014*	2015*	2016*	2017*
Սպառում	96.6	101.2	103.7	101.6	100.2	99.3	98.3
Ներդրումներ	27.3	25.4	21.7	21.9	21.3	21.5	22.3
Ջուտ արտահանում, այդ թվում	-23.6	-24.8	-23.6	-22.4	-21.3	-20.2	-19.2
Արտահանում	23.8	24.6	27.0	27.4	27.8	28.2	28.5
Ներմուծում	47.4	49.3	50.6	49.8	49.0	48.4	47.7
Վիճ. շեղում	-0.3	-1.8	-1.8	-1.7	-0.9	-1.3	-2.1
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100	100	100

ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքում ներդրումների կշիռը աճում է 2014թ. միջնաժամկետում կայունանալով 22.3 տոկոսի շուրջ՝ ընդ որում բնակարանային շինարարությունը կունենա նվազման, իսկ արտադրական ոլորտում իրականացվող շինարարությունը աճի միտում: Միաժամանակ, արտահանման կշիռը ունենալու է շարունակական աճի միտում:

Արդյունքում միջնաժամկետ կանխատեսումներում ամբողջական պահանջարկի աճի մի զգալի մասը պայմանավորված է լինելու արտաքին պահանջարկով՝ 5.3 տոկոս ՀՆԱ-ի միջին աճին շուրջ 2.0 տոկոսային կետով կնպաստի արտահանման աճը:

### **Գնային փոփոխականներ**

Տնտեսությունում գների մակարդակը բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով: Իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս որոշակի սպառողական ապրանքների զամբյուղի գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

### **Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները**

**ՍԳԻ.** 2011 թվականի երկրորդ կեսից 12-ամսյա գնաճը շարունակաբար նվազեց և տարեվերջին ձևավորվեց 4 տոկոս նպատակային ցուցանիշի +1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում՝ կազմելով 4.7 տոկոս: Վերջինիս նպաստեցին ինչպես տարեսկզբին ԿԲ-ի դրամավարկային պայմանների խստացումը և տարվա ընթացքում իրականացված զսպողական հարկաբյուջետային քաղաքականությունը, այնպես էլ գյուղատնտեսության ճյուղում առաջարկի վերականգնումը և արտաքին աշխարհից փոխանցվող գնաճային ճնշումների թուլացումը:

2012 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը ձևավորվեց 4 տոկոս նպատակային ցուցանիշի -1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում՝ կազմելով 3.2 տոկոս: Ցածր գնաճային միջավայրը պայմանավորվել է գերազանցապես պարենային ապրանքների գների անկմամբ, որի կառուցվածքում զգալի նվազում է դիտվել գյուղատնտեսական ապրանքների (մասնավորապես՝ «Բանջարեղեն և կարտոֆիլ» և «Միրգ» ապրանքախմբերի) գներում: Սակայն որոշ պարենային ապրանքների գներում նկատվել է նաև աճի միտում, մասնավորապես՝ ներքին գների վրա ազդեցություն է ունեցել ցորենի միջազգային գների աճը՝ հանգեցնելով «Հացամթերք» ապրանքախմբի գների աճին:


2013 թվականի երկրորդ կեսից 12-ամսյա գնաճը դուրս է եկել թիրախային մակարդակից և օգոստոս ամսին հասել նախորդ երկու տարվա կտրվածքով ամենաբարձր 9.3 տոկոս մակար-

դակի: Վերջինս հիմնականում պայմանավորված էր էներգակիրների սակագների աճով, ինչպես նաև «Բանջարեղեն և կարտոֆիլ» և «Հացամթերք» ապրանքախմբերի գնաճով: Սակայն հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կորրոկինացված և հաշվեկշռված իրականացման շնորհիվ գնաճը մեղմվել է և տարեվերջին մոտեցել թույլատրելի միջակայքի վերին սահմանին՝ 5.6 տոկոս:

2014 թվականի ապրիլին արձանագրված 4.4 տոկոս 12-ամսյա գնաճը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը) գների՝ 3.1 տոկոս (նպաստումը գնաճին՝ 1.6 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների՝ 1.8 տոկոս (նպաստումը գնաճին՝ 0.09 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 8.5 տոկոս (նպաստումը գնաճին՝ 2.6 տոկոսային կետ) աճով:

**Կանխատեսում:** 2014 թվականը բնորոշվում է գնաճային ռիսկերի թե՛ արտաքին, թե՛ ներքին անորոշություններով: Ըստ այդմ՝ կանխատեսվում է, որ 12-ամսյա գնաճի ցուցանիշը գնալով կնվազի և տարվա երրորդ եռամսյակում կգտնվի 4% (+/-1.5) տոկոսային կետ գնաճի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանին մոտ: Տարվա երկրորդ կեսին հնարավոր են գնաճի՝ ստորին սահմանից բարձրացման ռիսկեր՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագների հնարավոր աճով և հատկապես վերջինիս՝ գնաճի վրա ունեցած երկրորդային ազդեցությամբ: Տարեվերջում կանխատեսվում է գնաճային միջավայրի կայունացում շնորհիվ հարկաբյուջետային և դրամավարկային ծրագրերի կորրոկինացման և խթանող ազդեցության: 2015-2017 թվականներին կանխատեսվող 12-ամսյա գնաճը ևս կպահպանվի նպատակային թիրախի 4% (+/-1.5) տոկոս տատանման թույլատրելի միջակայքում:

*Գծապատկեր 3. 2000-2017 թվականների 12-ամսյա գնաճի դինամիկան*



**Դեֆլյատոր:** ՀՆԱ ինդեքս դեֆլատորը 2011-2013 թվականներին եղել է միջինում 102.1 տոկոս՝ գտնվելով բավականին ցածր մակարդակում: Դեֆլատորի աճին հիմնականում նպաստել է ծառայությունների գների ինդեքսը, որն աճել է միջինում 3.5 տոկոսով: Հաջորդ համեմատաբեր մեծ նպաստումն ունեցել է արդյունաբերության գների ինդեքսը. որը պամանավորված է էլեկտրաէներգիայի դեֆլատորի միջինում 15.6 տոկոս աճով: Գյուղատնտեսության գները փոքր նպաստում են ունեցել դեֆլատորի աճին՝ միջինում աճելով 2.1 տոկոսով: Շինարարության դեֆլատորը բացասական նպաստում է ունեցել դեֆլատորի աճին՝ միջինում նվազելով 2.9 տոկոսով:

2014 թվականի առաջին եռամսակում նախորդ տարվա ցածր գնային միջավայրը պահպանվել է և արձանագրվել է դեֆլատորի համեստ՝ 0.9 տոկոս աճի ցուցանիշ: Ընդ որում՝ շինարարության դեֆլատորը նվազել է 1.8 տոկոսով, արդյունաբերության և ծառայությունների գները՝ 2.0 տոկոսով: Գյուղատնտեսության դեֆլատորը ցածր՝ 0.7 տոկոս աճ է ունեցել:

**Կանխատեսում:** Մինչև տարեվերջ կանխատեսում ենք ՀՆԱ-ի դեֆլատորի 104.0 տոկոս: Միջնաժամկետում նույնպես դեֆլատորի միջին աճը կկազմի 4 տոկոս:

## **Ֆինանսական շուկա**

Ֆինանսական շուկաները բնութագրվում են մի շարք ցուցանիշների համախմբով: Սակայն, այս բաժնում կներկայացվեն հիմնականում երկու ցուցանիշ՝ առաջինը ֆինանսական միջնորդության խորությունն է և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է, թե ֆինանսական ինստիտուտները (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ինչ չափով են ներգրավված տնտեսություն մեջ:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս, թե ինչքան է փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Գնաճի տրված մակարդակի պայմաններում եթե տոկոսադրույքները բարձր են, ապա ռիսկայնության աստիճանը բարձր է, կամ հակառակը:

Այսինքն՝ ֆինանսական շուկայի միջոցով կարգավորվում է փողի նկատմամբ առաջարկը և պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար: Այդ տեսանկյունից, ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական կայունության պահպանման տեսանկյունից ունի կարևոր նշանակություն:

**Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները**

2012-2013 թվականներին տնտեսության աճի կայունացմանը զուգահեռ փողի զանգվածի միջին աճը կազմել է 17.1 տոկոս: Ընդ որում՝ նույն ժամանակահատվածների համար փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը միջինում աճել է 5.0 տոկոսով, դրամային ավանդները՝ 22.5 տոկոսով, իսկ արտարժույթային ավանդները՝ 22.3 տոկոսով:

2012-2013 թվականներին փողի բազայի միջին աճը կազմել է 15.9 տոկոս: Ընդ որում՝ նշված ժամանակահատվածի համար ԿԲ-ից դուրս կանխիկը և դրամով պարտադիր պահուստները միջինում աճել են համապատասխանաբար՝ 5.9 և 11.7 տոկոսով, իսկ պարտադիր պահուստները արտարժույթով՝ 80.7 տոկոսով:

Վերջին տարիներին առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի կշիռը ՀՆԱ-ի մեջ զգալի ավելացել է: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2012 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 336.9 մլրդ դրամով կամ՝ 26.6 տոկոսով<sup>12</sup> և ՀՆԱ-ի մեջ կազմել 40 տոկոս: 2013 թվականին վարկերը ավելացել են 192.5 մլրդ դրամով (12 %-ով) և ՀՆԱ-ի մեջ կազմել 42 տոկոս:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2012 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ նույնպես ավելացել են՝ 189 մլրդ դրամով և ՀՆԱ-ի մեջ կազմել են 30 տոկոս: 2013 թվականի վերջի դրությամբ ներգրավված ավանդները նախորդ տարվա համեմատ ավելացել են 400.3 մլրդ դրամով կամ 33 տոկոսով և ՀՆԱ-ի մեջ կազմել 38 տոկոս:

**Աղյուսակ 5. Բանկային ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը (մլրդ դրամով)**

	2011	2012	2013	2014*	2015*	2016*	2017*
Վարկեր	1268.8	1605.7	1798	2086.0	2321.4	2597.6	2855.5
Վարկերի կշիռը ՀՆԱ-ում % <sup>13</sup>	34	40	42	45	46	47	47
Ավանդներ	1023.1	1212.1	1612	4621.5	5046.6	5526.7	6075.4
Ավանդների կշիռը ՀՆԱ-ում, %	27	30	38	39	42	41	41

\*Տվյալների աղբյուրը ՀՀ ԿԲ

<sup>12</sup> Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

<sup>13</sup> Յուրանիշների համադրելիությունը ապահովելու տեսանկյունից վարկերը պետք է դիտարկել տարեկան ՀՆԱ-ի մեջ:

Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները 2013 թվականին միջին հաշվով կազմել են 10.16 տոկոս՝ 2012 թվականի 9.5 տոկոսի համեմատ: Իսկ առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2013 թվականին միջին հաշվով կազմել են 15.9 տոկոս՝ 2012 թվականի 17.2 տոկոսի համեմատ:

Հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև սարեղը 2013 թվականին 2012 թվականի նկատմամբ նվազել է միջինում 1.8 տոկոսային կետով՝ կազմելով 5.8 տոկոսային կետ:

**Կանխատեսում:** 2014 թվականին նախատեսվող ընդլայնող դրամավարկային քաղաքականության պայմաններում, սպասվում է որ փողի բազայի աճը 2014 թվականին կկազմի շուրջ 2.5 տոկոս, իսկ փողի զանգվածի աճը՝ 11.5 տոկոս: Միջնաժամկետ հատվածում, արդեն տնտեսական զարգացումներին համահունչ, 2015-2017 թվականների համար փողի բազայի և փողի զանգվածի միջին աճերը կկազմեն համապատասխանաբար՝ շուրջ 6.3 և 11.3 տոկոս:

### **Վճարային հաշվեկշիռ**

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- ընթացիկ հաշիվ (հիմնականում ցույց է տալիս արտահանման և ներմուծման հետ կապված հոսքերը),
- կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս կապիտալի ներհոսքն ու արտահոսքը):

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է:

#### **Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները**

**Ընթացիկ հաշիվ<sup>14</sup>:** ՀՀ կառավարության քաղաքականությունը արտահանման խթանման ուղղությամբ տվեց իր դրական արդյունքները՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամից ՀՀ տնտեսության վերականգնմանը զուգընթաց տնտեսության արտաքին հատվածը արագ վերա-

<sup>14</sup> Սույն վերլուծության համար հիմք են ծառայել ՀՀ վճարային հաշվեկշռի նոր մեթոդաբանությամբ (ԱՄՀ, BPM-6 ձեռնարկ) վերանայված պաշտոնական տվյալները:

կանգնվեց և շարունակում է բարելավվել: 2012-2013 թվականներին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմեց համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) միջինում 11.3 տոկոսը՝ բարելավվելով նախորդ երկու տարիների (2010-2011թթ.) 12.8 տոկոս միջին մակարդակը: Արտաքին պահանջարկի և արտահանման ծավալների աճի հետ մեկտեղ ավելացել են Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները՝ նպաստելով 2013 թվականի արդյունքներով ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը մինչև ՀՆԱ-ի 10.5 տոկոսը: Աղյուսակ 7-ում ներկայացված են արտաքին հատվածի հիմնական ցուցանիշների միտումները և սպասումները (տե՛ս նաև Գծապատկեր 4-ը):

**Արտաքին առևտուր<sup>15</sup>:** ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը 2013 թվականին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 4.0 տոկոսով, ընդ որում՝ տեղի է ունեցել ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման դոլարային արտահայտությամբ ծավալների աճ. արտահանումն աճել է 7.1 տոկոսով՝ կազմելով 1478.7 մլն դոլար, իսկ ներմուծումը աճել է 2.9 տոկոսով՝ կազմելով 4385.9 մլն դոլար:

2014 թվականի անցած ամիսներին տնտեսության արտաքին հատվածում շարունակվում են նախորդ տարիների ընթացքում ձևավորված դրական զարգացումները: 2014 թվականի հունվար-ապրիլին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 1.6 տոկոսով: Արտաքին պահանջարկի աճի հաշվին դրամական մուտքերի աճի հետ մեկտեղ տարվա առաջին չորս ամիսներին բանկային համակարգի միջոցով Հայաստան ներհոսող ոչ առևտրային բնույթի փոխանցումների աճը (6.3 տոկոս) դրական նպաստում է ցուցաբերում ընթացիկ հաշվի զարգացումներին: 2014 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում ներմուծման 1.3 տոկոս աճին զուգահեռ տեղի է ունեցել արտահանման ծավալների 2.3 տոկոս աճ:

**Ներմուծում:** 2013 թվականին ներմուծման աճը (դոլարային արտահայտությամբ) հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների, այդ թվում՝ աշխատողների դրամական փոխանցումների աճով: Ներմուծման ընդհանուր 2.9 տոկոս աճի ամենաբարձր՝ 2.7 տոկոսային կետը պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», 0.9 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» և 0.8 տոկոսային կետը՝ «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման աճով (աճը համապատասխանաբար կազմել է 64.9, 11.2 և 10.2 տոկոս):

<sup>15</sup> Այսուհետ «Վճարային հաշվեկշիռ» բաժնում բերված վերլուծության համար հիմք են ծառայել 2013 թվականի արտաքին առևտրի պաշտոնական ճշգրտված տվյալները՝ հաշվարկված արտահանումը ՖՕՔ, իսկ ներմուծումը՝ ՍԻՖ գներով, ինչը թույլ է տալիս կատարել առավել մանրամասն վերլուծություն (ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-ապրիլին», հրապարակված է 2014թ. մայիսի 31-ին):



Տարվա ընթացքում արձանագրվել է ներդրումային բնույթի ապրանքների<sup>16</sup> ներմուծման 0.8% նվազում, ինչը 0.1 տոկոսային կետով հակազդել է ներմուծման աճին, ընդ որում, այդ ապրանքների տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 17.3%՝ 0.6 տոկոսային կետով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակին (17.9%): «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի 4.7 տոկոս նվազումը ներմուծման աճին ամենաբարձր՝ 1.0 տոկոսային կետ բացասական նպաստումն է ունեցել: Ներմուծման աճին 0.3 տոկոսային կետով հակազդել է նաև կառուցվածքում մեծ կշիռ ունեցող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի 4.0 տոկոս նվազումը: 2014 թվականի հունվար-ապրիլի ընթացքում ՀՀ ներմուծումն աճել է 1.3 տոկոսով՝ կազմելով 1346.3 մլն ԱՄՆ դոլար:

**Կանխադեսում:** 2014 թվականին սպասվում է 4.0 տոկոս ապրանքների ներմուծման աճ (դոլարային արտահայտությամբ): 2015-2017 թվականներին ներմուծման աճի միտումները կպահպանվեն, միջին տարեկան աճը կկազմի 5.5 տոկոս՝ պայմանավորված հիմնականում ներքին տնտեսության եկամուտների աճով, իսկ ապրանքների և ծառայությունների համար՝ 5.4 տոկոս:

**Արտահանում:** Արտահանման խթանմանն ուղղված ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության և համաշխարհային տնտեսության դանդաղ վերականգնման պայմաններում արտահանման աշխուժացման և ծավալների վերականգնման ձեռքբերումները շարունակվում են: 2013 թվականի արդյունքներով արտահանման 7.1 տոկոս աճի ամենաբարձր՝ 4.0 տոկոսային կետը պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման 21.7 տոկոս ավելացմամբ: Արտահանման աճին նպաստել են նաև «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» (1.5 տոկոսային կետով), «Մանածագործական իրեր» (1.4), «Բուսական ծագման արտադրանք» (1.1) և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (1.1) ապրանքախմբերը: Արտահանման աճին 2.4 տոկոսային կետով հակազդել է կառուցվածքում մեծ կշիռ ունեցող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 1.5 տոկոսային կետով «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ» ապրանքախմբերի ծավալների նվազումը (համապատասխանաբար՝ 9.7 և 48.8 տոկոս): 2014 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում ՀՀ արտահանումն աճել է 2.3 տոկոսով՝ կազմելով 466.5 մլն ԱՄՆ դոլար:

**Կանխադեսում:** Ընթացիկ բարենպաստ մակրոտնտեսական իրավիճակը որոշ գործընկերներին ներմուծում, մյուսներում՝ աճի տեմպի որոշակի դանդաղումն արտահանման առավել զգուշավոր կանխատեսման հիմք են ծառայում: Այնուհանդերձ, 2014 թվականին սպասվում է 8.7 տոկոս արտահանման աճ՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության զարգացման դրական հեռանկարներով (տե՛ս Ներդիր 1-ը) և արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության

<sup>16</sup> Որպես ներդրումային բնույթի դիտարկվել են «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքային խմբերը:

իրականացման շնորհիվ արտահանման վերաբերյալ սպասումների լավատեսությամբ: Միջնա-  
ժամկետում համաշխարհային թողարկման աճին և ՀՀ կառավարության կողմից տնտեսության  
արտահանելի ոլորտում տարվող քաղաքականության ուղղությանը համահունչ ակնկալվում է, որ  
արտահանման աճը կշարունակվի և ապրանքների արտահանման ծավալները կկազմեն շուրջ  
2158.0 մլն ԱՄՆ դոլարի (\$ՕԲ) միջին տարեկան մակարդակ և միջին տարեկան 9.8 տոկոս աճ  
(դոլարային արտահայտությամբ): Նույն ցուցանիշը ապրանքների և ծառայությունների համար  
կկազմի շուրջ 8.3 տոկոս (3538 մլն ԱՄՆ դոլար):

**Գործընկեր երկրներ:** Հայաստանը լինելով փոքր և բաց տնտեսություն արագ է արձա-  
գանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին. համաշխարհային տնտեսության  
և ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական վերելքով պայմանավորված համաշխար-  
հային ֆինանսական ճգնաժամի ժամանակահատվածում կրճատված արտարժույթի ներհոսքը  
դեպի հանրապետություն վերականգնվեց՝ նպաստելով նաև տնօրինվող եկամուտների և ՀՀ  
տնտեսական աճին:

**Արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը:** Արտարժույթի ներհոսքը արտա-  
հանման հաշվին, վերջինիս հետճգնաժամային տարիներին սպասվածից բարձր աճով պայմա-  
նավորված, արագ վերականգնվեց: Հայաստանյան ապրանքների նկատմամբ ներկայացնելով  
հիմնական պահանջարկը՝ 2013 թվականի ՀՀ արտահանման 7.1 տոկոս աճի շուրջ 10.5 տոկո-  
սային կետը ապահովել են հետևյալ 5 երկրները. Ռուսաստան՝ 4.0, Չինաստան՝ 2.7, Բուլղարիա՝  
1.7, Իտալիա՝ 1.1 և Վրաստան՝ 1.0 տոկոսային կետերով: Նշված երկրներ արտահանվող հիմնա-  
կան ապրանքատեսակներն են. պղնձի հանքաքարը, երկաթամիահալվածքը, ոգելից խմիչքները  
(կոնյակ), ադամանդը, էլեկտրաէներգիան և այլ ապրանքներ: Մյուս հիմնական գործընկեր  
երկրների նպաստումը արտահանման աճին 2013 թվականի արդյունքներով հիմնականում  
բացասական էր (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը):

Աղյուսակ 6. Գործընկեր երկրների նպաստումը ընդհանուր արտահանման աճին և  
ընդհանուր արտահանման մեջ հիմնական գործընկեր երկրների կշիռները, %

	2008	2009	2010	2011	2012	2013	
<b>Ընդամենը արտահանման աճ, %</b>	-8.3	-32.8	46.6	27.7	3.4	7.1	Պահանջարկ ունեցող հայաստանյան հիմնական ապրանքատեսակները <sup>17</sup>
<b>Ռուսաստանի Դաշնություն</b>							Կոնյակ, ռոմ, ջին օդի լիկյոր Ադամանդե քար
տեսակարար կշիռը, %	19.7	15.1	15.4	16.8	19.6	22.6	
նպաստման չափը, %	0.6	-9.5	7.5	6	4.3	4.0	
<b>Գերմանիա</b>							Երկաթամիահալվածք, պղինձ
տեսակարար կշիռը, %	17.4	16.2	12.7	11.9	10.7	5.8	
նպաստման չափը, %	1.2	-6.5	2.5	2.4	-0.4	-1.4	

<sup>17</sup> Առանձին երկրներով հիմնական պահանջարկը հայաստանյան ապրանքների նկատմամբ որոշվել է ըստ երկիր-ապրանք կտրվածքի  
ՀՀ ԱՎԾ-ի վերջին պաշտոնական հրապարակման (տվյալ դեպքում՝ 2012 տվյալների կառուցվածքով):

<b>Բուլղարիա</b>							Պղնձի հանքաքար, խտանյութ
տեսակարար կշիռը , %	5.6	8.5	15	11.5	9.1	10.3	
նպաստման չափը, %	1.1	0	13.6	-	-1.7	1.7	
<b>Բելգիա</b>							Պղնձի հանքաքար, խտանյութ, ադամանդե քար
տեսակարար կշիռը , %	8.5	6.6	7	5.3	8.9	8.9	
նպաստման չափը, %	-0.9	-4	3.6	-	4.2	0.3	
<b>Իրանի Իսլամական Հանրապետություն</b>							Էլեկտրաէներգիա
տեսակարար կշիռը , %	2.4	4.7	8.1	8	6.8	6.4	
նպաստման չափը, %	-1.2	0.8	7.3	2.1	-0.6	-1.0	
<b>Միացյալ Նահանգներ</b>							Ալյումին և իրեր դրանից
տեսակարար կշիռը , %	5	9.4	7.9	7.6	6.1	6.0	
նպաստման չափը, %	0.1	1.3	2.2	1.7	-1.0	0.1	
<b>Կանադա</b>							Ոսկի անմշակ կամ կիսամշակ
տեսակարար կշիռը , %	1.5	4.8	2.8	5.3	6.0	5.9	
նպաստման չափը, %	0.9	1.7	-0.6	3.9	1.1	0.2	
<b>Նիդերլանդներ</b>							Երկաթամիահալվածք, պղինձ
տեսակարար կշիռը , %	12.4	7.3	9.5	8.8	5.6	4.5	
նպաստման չափը, %	-2.2	-7.4	6.5	1.8	-2.8	-1.0	
<b>Շվեյցարիա</b>							Հանքաքար, խարամ և մոխիր, ժամացույցներ և դրանց մասեր
տեսակարար կշիռը , %	1.1	3.5	1.6	2.5	5.2	1.7	
նպաստման չափը, %	-3.2	1.2	-1.2	1.6	2.8	-3.4	
<b>Վրաստան</b>							Ապակի, պլաստմասսա, հանքային վառելանյութեր, աղ, ցեմենտ, ծխախոտ, շաքար
տեսակարար կշիռը , %	7.7	7.4	4.7	4.7	5.1	5.8	
նպաստման չափը, %	-0.5	-2.7	-0.5	3.8	0.7	1.0	
<b>Իսպանիա</b>							Պղնձի հանքաքար, խտանյութ
տեսակարար կշիռը , %	1.1	1.1	1.5	6.2	2.1	0.7	
նպաստման չափը, %	-0.4	-0.3	1.1	6.5	-3.9	-1.5	
<b>Չինաստան</b>							Պղնձի հանքաքար, խտանյութ
տեսակարար կշիռը , %	0.2	2.5	3.0	1.2	2.3	4.7	
նպաստման չափը, %	-0.5	1.5	1.8	-1.4	1.1	2.7	
<b>Իտալիա</b>							Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ
տեսակարար կշիռը , %	2.6	1.0	0.5	0.3	0.6	1.6	
նպաստման չափը, %	-0.2	-2.0	-0.3	0.02	0.2	1.1	

2013 թվականի երկրի ավելցուկային սպառողական պահանջարկը բավարարվել է հիմնականում հետևյալ գործընկեր երկրներից ներմուծման հաշվին՝ Շվեյցարիա (նպաստումը 2.0 տոկոսային կետ, ներմուծվում է՝ ատամանդ), Ռումինիան (0.7, հանքային վառելանյութեր), Գերմանիա (0.4, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դեղագործական մթերք), Վրաստան (0.4, փայտ և փայտից իրեր, փայտածուխ, սև մետաղներ), որոնք ապահովել են 2013 թվականի ընդհանուր ներմուծման 2.9 տոկոս աճի 2.5 տոկոսային կետը: Գործընկեր երկրներից <<

ներմուծման աճին բացասական նպաստում են ունեցել Ռուսաստանը<sup>18</sup> 0.8, Իրանը՝ 0.5 և Բուլղարիա՝ 0.4 տոկոսային կետ:

Արտահանման և ներմուծման նշված միտումների արդյունքում 2012-2013 թվականներին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության միջինում շուրջ 29.3 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ և 28.6 տոկոսը՝ ԵՄ երկրներին: 2013 թվականին ԱՊՀ երկրների ՀՀ ապրանքաշրջանառությունը աճել է 1.7 տոկոսով, իսկ ԵՄ երկրների ՀՀ ապրանքաշրջանառությունը՝ 0.8 տոկոսով: 2013 թվականին ՀՀ խոշոր յոթ առևտրային գործընկեր երկրների շրջանակում ընդգրկված էին Չինաստանը (առևտրաշրջանառության 7.8 տոկոս), Գերմանիան (6.2 տոկոս), Իրանը (5.0 տոկոս), ԱՄՆ-ն (3.9 տոկոս), Բուլղարիան (3.8 տոկոս), ինչպես նաև ԱՊՀ երկրներից Ռուսաստանը (23.2 տոկոս) և Ուկրաինան (4.1 տոկոս):

2014 թվականի հունվար-ապրիլին ՀՀ ապրանքների արտահանման 2.3 տոկոս աճին հիմնականում նպաստել են Չինաստանը՝ 5.8, Գերմանիան՝ 4.9, Իրաքը՝ 1.5 տոկոսային կետերով: Նույն ժամանակահատվածում արտասահմանյան ապրանքների ներմուծման 1.3 տոկոս աճին հիմնականում նպաստել են՝ Բելգիան՝ 0.9, Նիդերլանդները՝ 0.9, Թուրքիան՝ 0.8, Ճապոնիան՝ 0.8 տոկոսային կետ, իսկ Բուլղարիան, Ռումինիան, Ուկրաինան 3.0 տոկոսային կետով նպաստել են ներմուծման նվազմանը (յուրաքանչյուրը՝ -1.0 տոկոսային կետերով):

**Դրամական փոխանցումներ**<sup>19</sup>: ՀՀ ներհոսող մասնավոր տրանսֆերտներն ու աշխատողների վարձատրություն դրամական փոխանցումները (միջին ծավալը 2012-2013 թվականներին կազմել է շուրջ 2144 մլն. ԱՄՆ դոլար) երկու տարիներին միջինում աճել են 10.8 տոկոսով: Ընդ որում՝ մասնավոր տրանսֆերտները 2012-2013 թվականներին միջինում աճել են շուրջ 11.2, իսկ աշխատողների վարձատրություն հաշվին դրամական փոխանցումները՝ 10.4 տոկոսով: 2013 թվականին դրամական փոխանցումները ընդհանուր առմամբ ավելացել են մոտ 13.0 տոկոսով՝ նպաստելով բնակչության տնօրինվող եկամուտների աճի, տնտեսական ակտիվության և տնտեսական աճի հիմնական շարժիչ ճյուղերի աշխուժացմանը (մասնավոր տրանսֆերտներն աճել են շուրջ 11.4, իսկ աշխատողների վարձատրություն փոխանցումները՝ 14.7 տոկոսով):

Մասնավոր տրանսֆերտների և աշխատողների դրամական փոխանցումների հիմնական աղբյուր է հանդիսանում գործընկեր երկրների տնտեսական աճը. և՛ Ռուսաստանի և՛ ԱՄՆ միջին աճերը 2012-2013 թվականներին կազմել է 2.4-ական տոկոս (տես Ներդիր 1-ը): 2013

<sup>18</sup> 2013 թվականի արտաքին առևտրի ճշգրտված պաշտոնական տվյալների համաձայն (ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-ապրիլին») ՌԴ-ի բացասական նպաստումը ներմուծման աճին (ներմուծման արժեքի զգալի նվազումը) պայմանավորված է 14.02.2014թ. «ՀայՌուագազարդ» ՓԲԸ-ի և «ԳազՊրոմ Էքսպորտ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի լրացուցիչ համաձայնագրով սահմանված գազի գնի նվազման հետ:

<sup>19</sup> Որպես դրամական փոխանցումներ դիտարկվել են ՀՀ վճարային հաշվեկշռի BPM-6-ի «Աշխատողների վարձատրություն» (Ավգբնական եկամուտներում), «Անձնական տրանսֆերտներ (ընթացիկ տրանսֆերտներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև)» (Երկրորդային եկամուտներում) և «Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՈԱԿ» (Կապիտալ տրանսֆերտներում) հոդվածները՝ BPM-5-ի «Ձինձառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումներ, ներառյալ սահմանային աշխատողների» և «Մասնավոր տրանսֆերտներ» հոդվածների փոխարեն:

թվականին դրամական փոխանցումների կառուցվածքում այդ երկրների կշիռը համապատասխանաբար կազմել է 85.9 և 4.4 տոկոս՝ վկայելով հատկապես Ռուսաստանի տնտեսության զարգացումներից Հայաստանի մեծ կախվածության մասին: 2014 թվականի առաջին չորս ամիսներին դրամական փոխանցումների ներհոսքը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 6.3 տոկոսով՝ կազմելով 464.3 մլն. դոլար, ընդ որում Ռուսաստանից փոխանցումների մասնաբաժինը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ կրճատվել է՝ կազմելով 80.3 տոկոս:

**Փոխարժեք:** Նախորդ տարվա ընթացքում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները 2013 թվականին շարունակվել են: Այնուհանդերձ, արժեզրկումը տեղի է ունեցել ավելի դանդաղ տեմպերով, ինչի արդյունքում 2013 թվականի տարեվերջին՝ դեկտեմբեր ամսին փոխարժեքը կազմել է 405.32 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա դեկտեմբերին ձևավորված միջին փոխարժեքի (405.54) նկատմամբ արժևորվել է 0.06 տոկոսով: Ինչ վերաբերում է տարեկան միջին փոխարժեքին, ապա վերջինս 2013 թվականին կազմել է 409.63 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց (2012-ին՝ 401.76): Նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է ԱՄՆ դոլարի համեմատ դրամի անվանական արժեքի 1.9% արժեզրկում՝ 2012 թվականի համապատասխան ցուցանիշի 7.3% արժեզրկման դիմաց:

Դրամի արժեզրկման միտումը շարունակվել է նաև 2014 թվականի առաջին չորս ամիսներին. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 411.85 դրամ՝ ինչը բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինից 0.2 տոկոսով (2013թ-ի առաջին չորս ամիսներին՝ 411.17): Ընթացիկ տարվա չորս ամիսներին դրամի արժեզրկմանը նպաստել է տարեսկզբից դիտարկվող կապիտալի ներհոսքի (հիմնականում տրանսֆերտների և գործոնային եկամուտների տեսքով) աճի որոշակի դանդաղումը:

**Կանխարեսում:** Հայաստանի տնտեսության արտաքին հատվածում տեղի ունեցող դրական փոփոխությունները 2014 թվականին կշարունակվեն, ինչը հիմնականում պայմանավորված կլինի Հայաստանի հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվությամբ, համաշխարհային տնտեսության վերականգնմամբ և կառավարության կողմից տնտեսության արտահանելի հատվածին ցուցաբերված օժանդակությամբ: 2014 թվականին ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ առանց պաշտոնական տրանսֆերտների ընթացիկ հաշվի պակասուրդի 10.3 տոկոս մակարդակ, իսկ 2015-2017 թվականներին այն կկազմի միջինը 8.2 տոկոս (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները համապատասխանաբար՝ 9.8 և 7.9 տոկոս): Ընթացիկ հաշվի բարելավմանը էապես կնպաստի նաև կառավարության հարկաբյուջետային քաղաքականության աստիճանական խստացումը՝ ի դեմս պետական հատվածի պակասուրդի աստիճանական կրճատման:

Աղյուսակ 7. Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)

Գծապատկեր 4. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ, %

